ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատված է

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԳԵՈՐԳ ԲՐՈՒՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ

թիվ 5 նիստում,

“10” դեկտեմբերի, 2021թ.

_______________

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԳԵՈՐԳ ԲՐՈՒՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԵՐԵՎԱՆ 2021

1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

| |
|---|
| Հաշվետու տարում ամբիոնի ուսումնական աշխատանքների ծրագրված ծավալը, կատարված ուսումնական աշխատանքի ծավալը: |
| Հաշվետու տարում (2021 թ.) 2020-2021 ուս. տարվա երկրորդ և 2021-2022 ուս. տարվա առաջին կիսամյակներում ծրագրված աշխատանքները՝ ըստ նույն ժամանակահատվածներն ընդգրկող աշխատանքային պլանների սահմանված ժամանակացույցի, իրականացվել է 100 %-ով: |
| Հաշվետու տարում ամբիոնի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության մոտեցումներն ու քաղաքականությունը, որքանով է այն նպաստել ուսանողակենտրոն ուսուցմանը: |
| Հաշվետու տարում ամբիոնում իրականացվող բոլոր դասընթացների ուսուցանումից ակնկալվող արդյունքները համապատասխանում են դրանց դասավանդման և ուսումնառության առկա փաստացի արդյունքներին, այնքանով, որքանով դա տեսանելի է Ամբիոնի ՊԴԱ-ի և սպասարկվող ֆակուլտետների դեկանատների դիտանկյունից: Դասավանդման և ուսումնառության մոտեցումներն ու մեթոդները պարբերաբար արդիականացվել են, դրանց նկատմամբ վերահսկողությունը Google Classroom-ի հարթակում մշտադիտարկվել է Ամբիոնի վարիչի, Ամբիոնի Google Classroom-ի հարթակի պատասխանատուի, ինչպես նաև ՀՊՄՀ որակի վարչության կողմից: Դասավանդման, ուսումնառության մեթոդների, գնահատման չափանիշների և մեխանիզմների վերամշակման, կատարելագործման և դրանց արդյունավետության բարձրացման հարցը պարբերաբար քննարկվում է Ամբիոնում, իրականացվում են դասալսումներ՝ հիմնական առցանց հարթակում: |
| Հաշվետու տարում ամբիոնում կիրառված ուսանողների գնահատման համակարգը, գնահատման բաղադրիչների ձևավորման մոտեցումները, ուսումնառության արդյունքների հետ կապը և ակադեմիական ազնվության ապահովմանն ուղղված աշխատանքները: |
| Հաշվետու տարում, ինչպես և նախորդ տարիներին, ուսանողների գնահատման համակարգը, մասնավորապես գնահատման մեթոդները, չափանիշները ու մոտեցումները վերանայվել են և իրականացվել են մի շարք միջոցառումներ ու մեխանիզմներ գնահատման արդյունավետությունն ու թափանցիկությունը, ինչպես նաև՝ ուսանողների ակադեմիական ազնվությունը ապահովելու ուղղությամբ: Այս տեսանկյունից ամբիոնի իրականացրած գործողություններն ու գործառույթները ընթանում են սկզբունքորեն նույն մեթոդաբանությամբ և մեթոդիկայով, ինչ որ նախորդ տարիներին, քանի որ հաշվետու տարում նոր դասավանդվող առարկաներ Ամբիոնը չի իրականացրել: Այսպես՝<br><br>● Առարկայական նկարագրերում ամրագրվել են գնահատման չափանիշները, վերջնական կամ ամփոփիչ գնահատականի բաղադրիչներն ու դրանց ձևավորման մեխանիզմները, սահմանվել են միջանկյալ ստուգումների (խմբային, վերլուծական, թեստային, գրավոր շարադրանքի, էսսեի) ինչպես նաև ընթացիկ ստուգումների գնահատման չափորոշիչները և գնահատականի ձևավորման մեխանիզմներն ու բաղկացուցիչ տարրերը:<br>● Գնահատման հարցում Ամբիոնն առաջնորդվում է Համալսարանի ուսումնական և որակի վարչությունների կողմից մշակված ընդհանրական գնահատման համակարգով:<br>● Գնահատման համակարգում մշտապես կարևորվում է ուսանողի վերլուծական, ինքնուրույն, ստեղծագործական, աշխատանքի բաղադրիչը, որը նպատակաուղղված է ուսանողի հետազոտական քննադատական-վերլուծական մտածողության խթանմանը: Այդ նպատակով միջանկյալ ստուգումներն ու ընթացիկ ստուգումները իրականացվում են էսսեների, վերլուծական աշխատանքների, խմբային (թիմային) աշխատանքների, թեստերի միջոցով, իսկ որոշ դասընթացների դեպքում՝ զուգակցվում ավանդական գրավոր շարադրանքների հետ:<br>● Գնահատման համակարգում Ընթացիկ ստուգման բաղադրիչը իրականացվում է ա) խմբային աշխատանքի կամ էսսեի, բ) էլեկտրոնային ակտիվության՝ (Google Classroom հարթակում ժամանակին գրանցվելու, դասընթացի էջում տեղ գտած առաջադրանքները ժամանակին կատարելու, դասախոսի կողմից ֆորումներում առաջադրված քննարկումներին ժամանակին արձագանքելու) կամ գ) լսարանում ուսանողների դրսևորած ակտիվության ցուցանիշով:<br><br>Գնահատման յուրաքանչյուր բաղադրիչի իրականացման փուլում դասախոսները գործնականում անդրադարձել են ստուգման յուրաքանչյուր կոնկրետ ձևի առանձնահատկություններից բխող պահանջների իրականացման եղանակներին ըստ առարկայական նկարագրերում սահմանված |

ելքային արդյունքների՝ մատնանշելով և մեկնելով գնահատման սահմանված հիմնաքարային մոտեցումները՝ տեսական հարցերի հնարավորինս ամբողջական ներկայացումը, ձևակերպումների ստույգությունը, շարադրման տրամաբանությունը, տեսական գիտելիքը ձևայնացնող առաջադրանք-վարժանքների ճիշտ իրականացնումը (մասնավորապես՝ Տրամաբանություն և Փաստարկման տեսություն առարկաների դեպքում), հետևությունների ու գնահատականների ինքնուրույնությունը, թեմայի ինքնուրույն արժևորումը, գրականության հնարավորինս ամբողջական օգտագործումը և այլն: Ընդ որում թվարկված յուրաքանչյուր պահանջի համար յուրաքանչյուր կոնկրետ առարկայի դեպքում սահմանվել են կոնկրետ որոշակի տոկոսաչափեր՝ կախված առարկայի առանձնահատկություններից:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ակադեմիական ազնվությունը ապահովելու գործում բարոյախրատական զրույցներն ու սպառնալիքները ժամանակի զուր և ապարդյուն վատնում են և հանգեցնում են ուսանողի ինքնագնահատականի իջեցման, անկարողության գիտակցման, Ամբիոնը վերջին տարիներին որդեգրել է այնպիսի քաղաքականություն, որը ըստ էության, լուծում է խնդիրը: Այն է՝ ստուգման ձևերն իրականացնել ըստ այնպիսի պահանջների, որոնց «մեխանիկական» կատարմամբ ուսանողը ինքնին կապահովի ինքնուրույն, ստեղծագործական աշխատանք և կըմբոշխնի սեփական աշխատանքի արգասիքը: Այսպիսի «տեխնիկայով» աշխատող ուսանողը երբևէ չի կարող և չի փորձի յուրացնել ուրիշի միտքը:

Այս խնդիրն իրագործելու նպատակով դասախոսը մշակում է Վերլուծական աշխատանքի, էսսեի իրականացման քայլերը, ըստ անհրաժեշտության Google Classroom-ի հարթակում տեղադրում է տիպօրինակներ, կազմակերպում է արտալսարանային պարապմունքներ և խորհրդատվություն՝ Ամբիոնին կից գործող և իր կազմը շարունակաբար ընդլայնող «Երիտասարդ փիլիսոփայի ամբիոն» խմբակի շրջանակներում, վիդեո ֆիլմերի, գեղարվեստական երկերի քննարկումներ և ընտրված հիմնախնդիրների դիտարկումներ այդ թվում նաև տեսական սեմինարների շրջանակներում:

| Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ուղղությամբ ընդունված որոշումները և հաստատված մեխանիզմները: |
|---|
| Հաշվետու տարում Ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, դրանց իրականացմանը նպաստող մեխանիզմները և դրանց կապակցությամբ ընդունված որոշումներն ամրագրվել են Ամբիոնի նիստերի արձանագրություններում (2020-2021 ուս. տարվա 2-րդ կիսամյակի և 2021-2022 ուս. տարվա 1-ին կիսամյակի նիտերի արձանագրությունների մասին հանգամանալից տվյալները տե՛ս ստորև ներկայացված համապատասխան սանդղակի նշումներ բաժնում): |

| Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ուղղությամբ ընդունված որոշումները և հաստատված մեխանիզմները: | | |
|---|---|---|
| Արձ.N, ամսաթիվ | Քննարկման հարցերը | Ընդունված որոշումները |
| Նիստ թիվ 6, Արձ.N 1, 27.01.2021 թ. | 1. 2020-2021 ուս. տարվա 1-ին կիսամյակի քննությունների արդյունքների ամփոփում:<br>2. 2020-2021 ուս.տարվա դասընթացները առերես կազմակերպելու հարցի շուրջ:<br>3. 2020-2021 ուս. տարվա 2-րդ կիսամյակի դասացուցակների տրամադրման հարցը:<br>4. Google Classroom հարթակում 2-րդ կիսամյակի դասընթացների էջերի ձևավորման շուրջ: | 1.Ընդունել ի գիտություն և էլեկտրոնային ամփոփագրերում ֆիքսել ամփոփիչ ստուգումների արդյունքները և սահմանվելիք ժամկետներում պատշաճ կերպով անցկացնել լուծարումները:<br>2.Ընդունել ի գիտություն:<br>3.Մինչև փետրվարի 8-ը ամբիոնի էլեկտրոնային փոստին ուղարկել երկրորդ կիսամյակի դասացուցակները:<br>4.Մինչև փետրվարի 2-ը Google Classroom հարթակում տեղադրել ամբիոնների նիստերում հաստատված առարկայական նկարագրերը, թեմատիկ տրոհումները և ուսումնական նյութերը: |

| | | |
|---|---|---|
| Նիստ թիվ 7, Արձ.N 1,<br>24.02.2021 թ. | 1. 2020-2021 ուս. տարվա 2-րդ կիսամյակում իրականացվող դասընթացների միջանկյալ ստուգումների թեստերի և գրավոր աշխատանքների տոմսերի հաստատում:<br>2. 2020-2021 ուս. տարվա 1-ին կիսամյակի միջանկյալ և ամփոփիչ քննությունների լուծարումների ընթացքի և արդյունքների քննարկում:<br>3. Էլեկտրոնային մատյանների լրացման շուրջ: | 1.Հաստատել 2020-2021 ուս. տարվա 2-րդ կիսամյակում իրականացվող դասընթացների միջանկյալ ստուգումների թեստերը և գրավոր աշխատանքների տոմսերը:<br>2.Հետևել էլեկտրոնային ամփոփագրերում 2020-2021 ուս. տարվա 1-ին կիսամյակի միջանկյալ և ամփոփիչ քննությունների լուծարումների արդյունքների ամրագրման պատշաճ կազմակերպմանն ու իրականացմանը:<br>3. Ընդունել ի գիտություն: |
| Նիստ թիվ 8, Արձ.N 1,<br>17.03.2021թ. | 1. Ամբիոնի զարգացման 2021-2025թթ. Ռազմավարական ծրագրի հարցը:<br>2. Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն և Փիլիսոփայություն դասընթացների որակավորման քննությունների հարցաշարերի և քննական տոմսերի քննարկման և հաստատման հարցը:<br>3. Ավարտական աշխատանքների ընթացքը, աշխատանքների ամբիոն հանձման և նախապաշտպանության կազմակերպման գործընթացի հարցը: | 1.Հաստատել ամբիոնի 2021-2025թթ. զարգացման ռազմավարական ծրագիրը և գործողությունների կատարման պլանը:<br>2.Հաստատել Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն և Փիլիսոփայություն դասընթացի որակավորման քննությունների հարցաշարն ու քննական տոմսերը:<br>3.Որոշեցին ընդունել ի գիտություն: |
| Նիստ թիվ 9, Արձ.N 1,<br>30.04.2021թ. | 1. Ավարտական աշխատանքների նախապաշտպանությունը:<br>2. Ավարտական աշխատանքների համար գրախոսներ նշանակելու հարցը:<br>3. 2020-2021 ուս. տարվա 2-րդ կիսամյակի առկա և հեռակա ուսուցման համակարգերի քննությունների ընթերակաների գրաֆիկի հաստատում և քննական տոմսերի պատրաստում: | 1.Աշխատանքները երաշխավորել պաշտպանության:<br>2.Ավարտական աշխատանքների գրախոսներ նշանակել՝<br>● Փիլ.գիտ.թեկ, դոցենտ Աշոտ Գևորգյանին,<br>● Փիլ. գիտ. դոկտոր, դոցենտ, Համլետ Հովհաննիսյանին,<br>● Փիլ.գիտ.թեկնածու, դոցենտ Անդրանիկ Ստեփանյանին:<br>3.Հաստատել 2020-2021 ուս. տարվա 2-րդ կիսամյակի Փիլիսոփայություն, Փիլիսոփայության պատմություն, Տրամաբանություն, Հայ փիլիսոփայության պատմություն դասընթացների քննական տոմսերը և քննությունների ընթերակաների գրաֆիկը: |
| Նիստ թիվ 1, Արձ.N 1,<br>25.08.2021 թ. | 1. 2021-2022 ուս. տարվա հաստատված դասաբաշխման ներկայացում:<br>2. 2021-2022 ուս. տարվա 1-ին կիսամյակում իրականացվող դասընթացների առարկայական նկարագրերի և թեմատիկ | 1.Հետևել յուրաքանչյուր դասախոսի ծանրաբեռնվածության իրականացմանը, դրա հիման վրա դասացուցակների կազմմանը:<br>2.Հաստատել 2021-2022 ուս. տարվա 1-ին կիսամյակում իրականացվող դասընթացների առարկայական |

| | | |
|---|---|---|
| | տրոհումների հաստատում և վերահաստատում:<br>3. Google Classroom հարթակում աշխատանքների կազմակերպման շուրջ:<br>4. 2020-2021 ուս. տարվա ՊԴԱ անհատական աշխատանքների հաշվետ-վությունների և 2021-2022 ուս. տարվա ՊԴԱ անհատական աշխատանքների պլանի ներկայացման շուրջ:<br>5. 2021-2022 ուս. տարվա ամբիոնի նիստերի տարեկան (ըստ կիսամյակների) պլանի քննարկում և հաստատում:<br>6. 2021-2022 ուս. տարվա 1-ին կիսամյակի դասացուցակների տրամադրման հարցը:<br>7. Ընթացիկ հարցեր.<br>• Դասընթացները հիբրիդային տարբերակով անցկացնելու մասին:<br>• Համաճարակային կանոնները պահպանելու մասին: | նկարագրերը և թեմատիկ տրոհումները:<br>3.Հետևել Google Classroom հարթակում դասընթացների բոլոր էջերում անհրաժեշտ նյութերի ապահովմանը:<br>4.Սահմանված ժակետներում տրամադրել 2020-2021 ուս. տարվա ՊԴԱ անհատական աշխատանքների հաշվետվությունը և 2021-2022 ուս. տարվա ՊԴԱ անհատական աշխատանքների պլանը:<br>5.Հաստատել 2021-2022 ուս. տարվա ամբիոնի նիստերի տարեկան պլանը:<br>6.Մինչև սեպտեմբերի 3-ը ըստ ուղարկված ձևաչափի տրամադրել 2021-2022 ուս. տարվա 1-ին կիսամյակի դասացուցակները:<br>7.Ընդունել ի գիտություն: |
| Նիստ թիվ 2, Արձ.N 1,<br>15.09.2021 թ. | 1. 2021-2022 ուս. տարվա ամբիոնի աշխատանքային պլանի քննարկում և հաստատում:<br>2. 2021-2022 ուս. տարվա 1-ին կիսամյակում իրականացվող դասընթացների միջանկյալ ստուգումների և ամփոփիչ քննությունների հարցաշարերի քննարկում և հաստատում:<br>3. 2021-2022 ուս. տարվա 1-ին կիսամյակում իրականացվող դասընթացների միջանկյալ ստուգումների թեստերի և գրավոր աշխատանքների տոմսերի հաստատում:<br>4. Google Classroom-ի հարթակում ամբիոնի դասախոսների կողմից իրականացվող դասընթացների էջերի դիտարկում:<br>5. Կուրսային ու դիպլոմային աշխատանքների թեմաների քննարկում և հաստատում:<br>6. Ամբիոնի բլոգի լրամշակում և թարմացում:<br>7. ՀՊՄՀ կայքում Ամբիոնի էջի անհրաժեշտ թարմացումների ապահովում: | 1. Հաստատել 2021-2022 ուս. տարվա ամբիոնի աշխատանքային պլանը:<br>2.Հաստատել 2021-2022 ուս. տարվա 1-ին կիսամյակում իրականացվող դասընթացների միջանկյալ ստուգումների և ամփոփիչ քննությունների հարցաշարերը:<br>3.Հաստատել 2021-2022 ուս. տարվա 1-ին կիսամյակում իրականացվող դասընթացների միջանկյալ ստուգումների թեստերի և գրավոր աշխատանքների տոմսերը:<br>4.ամրագրել Google Classroom-ի հարթակում ամբիոնի դասախոսների կողմից իրականացվող դասընթացների էջերի անհրաժեշտ թարմացումները:<br>5. Հաստատել կուրսային և դիպլոմային աշխատանքների թեմաները:<br>6.Լրամշակել և թարմացնել ամբիոնի բլոգը:<br>7.Ապահովել ՀՊՄՀ կայքում Ամբիոնի էջի անհրաժեշտ թարմացումների իրականացումը: |
| Նիստ թիվ 3, Արձ.N 1,<br>11.10.2021 թ. | 1.Ասպիրանտուրայում դասավանդվող Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն և Փիլիսոփայության տեսություն և | 1.Հաստատել Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն և Փիլիսոփայության տեսություն և |

| | | |
|---|---|---|
| | պատմություն դասընթացների հարցաշարերի քննարկում և հաստատում:<br>2.Ասպիրանտուրայում դասավանդվող Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն և Փիլիսոփայության տեսություն և պատմություն դասընթացների տոմսերի քննարկում և հաստատում: | պատմություն դասընթացների հարցաշարերը:<br>2.Հաստատել Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն և Փիլիսոփայության տեսություն և պատմություն դասընթացների տոմսերը: |
| Նիստ թիվ 4, Արձ.N 1,<br>15.11.2021 թ. | 1.Google Classroom հարթակում հեռակա ուսուցման համակարգի դասընթացների էջերի ձևավորման շուրջ:<br>2.Ավարտական աշխատանքների թեմաների քննարկում և հաստատում: | |
| Նիստ թիվ 5, Արձ.N 1,<br>10.12.2021 թ. | 1.Ամբիոնի տարեկան հաշվետվության քննարկում և հաստատում:<br>2.2021-2022 ուս. տարվա 1-ին կիսամյակի քննական տոմսերի հաստատում:<br>3.2021-2022 ուս. տարվա 1-ին կիսամյակի քննությունների կազմակերպման և ընթերակաների գրաֆիկի կազմման շուրջ: | 1.Հաստատել ամբիոնի տարոկան հաշվետվությունը:<br>2.Հաստատել 2021-2022 ուս. տարվա 1-ին կիսամյակի քննական տոմսերը:<br>3.Ընդունել ի գիտություն և հետևել իրականացմանը: |

| Պրոֆեսորադասախոսական կազմը | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Կանայք | Դոկտոր | Պրոֆե սոր | Գիտ.թ եկն. | Դոցենտ | Ասիս-տենտ | Դասա խոս | Ընդ-նը |
| Հաստիք ային | 3 | 2 | 1 | 3 | 3 | | 2 | **6** |
| Համա տեղող | 2 | 2 | 1 | 4 | 3 | 1 | 1 | **5** |
| Ժամա վճարայ ին | - | - | - | - | - | - | - | - |
| Ընդա-մենը | **5** | **4** | **2** | **7** | **6** | **1** | **3** | **11** |

2. ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

| Ամբիոնը ուսումնամեթոդական գործունեությունը հաշվետու տարում: |
|---|
| Հաշվետու տարում Ամբիոնում իրականացվել են թվով 43 դասընթացներ (102 դասընթաց Google Classroom հարթակում) համալսարանի բոլոր ֆակուլտետներում, առկա և հեռակա ուսուցման համակարգերի բակալավրիատում և մագիստրատուրայում, ինչպես նաև ասպիրանտուրայում, որոնց առարկայական նկարագրերը և ուսումնամեթոդական փաթեթները հանգամանորեն քննարկվել, վերանայվել, հաստատվել և վերահաստատվել են Ամբիոնի թիվ 5 (26.12.2020 թ.) և թիվ 1 (25.08.2021 թ.) նիստերում: Դասընթացներն իրականացվել են ինտերակտիվ մեթոդներով առցանց, առերես կամ զուգացված տարբերակներով:<br>**2020-2021 ուս. տարի, 2-րդ կիսամյակ**<br>**Բակալավրիատ՝**<br>1. Տրամաբանություն<br>2. Փիլիսոփայության պատմություն |

3. Փիլիսոփայություն
4. Գեղագիտություն
5. Սոցիալական փիլիսոփայություն
6. Մշակույթի փիլիսոփայություն
7. Հայ փիլիսոփայության պատմություն
8. Ընտր/դաս (Կրոնի տեսություն և պատմություն)
9. Ընտր/դաս (Մշակույթի փիլիսոփայություն)

**Մագիստրատուրա՝**

10. Ընտր/դաս (18-20-րդ դարերի փիլիսոփայական այլընտրանքները)
11. Ընտր/դաս (Գիտական աշխատանքի տեխնոլոգիա)
12. Ընտր/դաս (18-20-րդ դարերի փիլիսոփայական այլընտրանքները)
13. Ընտր/դաս (Փաստարկման տեսություն)
14. Ընտր/դաս (Բնական լեզու հասկացում,արհեստական ինտելեկտ)
15. Լեզվի փիլիսոփայություն
16. Տրամաբանություն
17. Կրթության փիլիսոփայություն
18. Հաղորդակցման տեխնոլոգիաներ
19. Հերմենևտիկա

2020-2021 ուս. տարի, 1-ին կիսամյակ

**Բակալավրիատ՝**

1. Փիլիսոփայության ներածություն
2. Մշակութային մարդաբանություն
3. Փիլիսոփայություն
4. Էթիկա և էթիկետ
5. Տրամաբանություն
6. Ընտր/դաս (Տրամաբանություն)
7. Կրոնի տեսություն և պատմություն
8. Ընտր/դաս (Էքզիստենցիալիզմը հայ գրականության մեջ)
9. Ընտր/դաս (Կրոնի տեսություն և պատմություն)
10. Ընտր/դաս (Գիտական աշխատանքի տեխնոլոգիա)
11. Ընտր/դաս (5) Բիոէթիկայի ընդհանուր տեսություն
12. Փաստարկում և ճարտասանություն
13. Ընտր/դաս (Մշակույթի փիլիսոփայություն)
14. Գեղագիտություն
15. Հայ փիլիսոփայության պատմություն
16. Ընտր/դաս (Լեզվի փիլիսոփայություն)

**Մագիստրատուրա՝**

17. Բիոէթիկայի հիմունքներ
18. Պատմության փիլիսոփայություն
19. Ընտր/դաս (Էքզիստենցիալիզմը հայ գրականության մեջ)
20. Ընտր/դաս (Գիտական հեղափոխությունները ճշգրիտ գիտություններում)
21. Ընտր/դաս (Փաստարկման տեսություն)
22. Պատմության փիլիսոփայություն

**Ասպիրանտուրա**

1. Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն
2. Փիլիսոփայության տեսություն և պատմություն

Հաշվետու տարում Ամբիոնում հրատարակվել է 13 ուսումնամեթոդական ձեռարկ:

| Ամբիոնի աշխատակիցների ուսումնամեթոդական հրատարակումների քանակը | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Դասագրքեր | | | Ուսումնական ձեռնարկներ | | |
| ՀՊՄՀ դասիչով | ՀՀ ԿԳՆ դասիչով | Այլ դասիչներով | ՀՊՄՀ դասիչով | ՀՀ ԿԳՆ դասիչով | Այլ դասիչներով |
| | | | | | **13** |

| Ամբիոնի մեթոդական կոնֆերանսների և սեմինարների քանակը | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Միջազգային | | Հանրապետական | | Քաղաքային | | Համալսարանական | | Ամբիոնային | |
| կոնֆ. | սեմ. | կոնֆ. | սեմ. | կոնֆ. | սեմ. | կոնֆ. | սեմ. | կոնֆ. | սեմ. |
| **7** | | **1** | | | | | | **1** | |

| Գիտաուսումնական և գիտամեթոդական դրամաշնորհներ | | | |
|---|---|---|---|
| Անվանում | Ժամկետ | Ֆինանսավորման ծավալ | Ամբիոնի մասնակից-անդամների քանակ |
| ՓՈԽԱԿԵՐՊՎՈՂ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ. ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆՆԵՐ (Բազային ֆինանսավորում, ԳՊԿ կողմից) | 2011-2021 թթ. | 3 308 200 (երեք միլիոն երեք հարյուր ութ հազար) | 2 |

3. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

| Ամբիոնի հետազոտական գործունեությունը: |
|---|
| Ամբիոնի պաշտոնական հանդես WISDOM-ն ըստ էության արտացոլում է Ամբիոնի դասախոսների գիտական հետաքրքրություններն ու հետազոտական գործունեությունը, այն իմաստով, որ ժողովածուի ենթաբաժինները, որոնցում ընդգրկվում են Ամբիոնի դասախոսների գիտական աշխատանքները, հենց սահմանվել են վերջիններիս գիտական հավակնություններին համապատասխան: |
| Ամբիոնի ՊԴԱ և ուսանողների գիտակահետազոտական աշխատանքները, հրապարակումները, անցկացրած կոնֆերանսները, սեմինարները, օլիմպիադաները հաշվետու տարում: |
| 2017 թ. Ամբիոնին կից ստեղծվեց «Երիտասարդ փիլիսոփայի ամբիոն» գիտական խմբակի կազմում ընդգրկվել են Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի «Հասարակագիտություն» մասնագիտության բակալավրիատի առաջին, երկրորդ, երրորդ և չորրորդ կուրսի ուսանողները: Պարբերաբար իրականացվում են սեմինար-քննարկումներ, ուսանողները հանդես են գալիս զեկույցներով:<br>Ամբիոնի ՊԴԱ կողմից հաշվետու տարում հրապարակվել է շուրջ 19 գիտական հոդված, որոնցից 5-ը միջազգային ցիտվող պարբերականներում, 8-ը գիտաժողովների զեկույցների ժողովածուներում, դասախոսները զեկույցներով մասնակցել են հանրապետական և միջազգային կոնֆերանսների:<br>Ամբիոնում պարբերաբար կազմակերպվել են թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների քննարկումներ, ընդ որում 2020 թ. ՔՈՎԻԴ-19-ով պայմանավորված համաճարակային պայմաններում քննարկումներն իրականացվել են առցանց հարթակում: Սոնա Դավթյանի “ԿԵՆՍԱԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՄԻՋԳԻՏԱԿԱՐԳԱՅԻՆ ԳԻՏԵԼԻՔԻ ԵՎ ԱՐԺԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՁԵՎ” ներկայացվել է պաշտպանության ՀՊՄՀ-ում գործող ՀՀ ԲՈԿ-ի Փիլիսոփայության 062 մասնագիտական խորհրդում:<br>2021թ. Գիտահետազոտական աշխատանքներ են իրականացվել ՀՀ ԳՊԿ-ի կողմից ֆինանսավորվող «Փոխակերպվող հասարակության հիմնախնդիրները. մեթոդաբանական և մեթոդական տեսանկյուններ» բազային ծրագրի շրջանակներում: Ծրագրի նպատակն է ուսումնասիրել անցումային փուլում գտնվող հասարակությունների, մասնավորապես կրթական ոլորտում տեղի ունեցող փոխակերպումների ընդհանուր օրինաչափությունները և այդ համատեքստում վերհանել Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցող ինստիտուցիոնալ և գործառութային, արժեքային վերափոխումների առանձնահատկությունները, մշակել երաշխավորություններ հասարակական կյանքի կրթական, քաղաքացիական և քաղաքական ոլորտներում կատարվող բարեփոխումների արդյունավետության բարձրացման վերաբերյալ:<br>Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջներն են՝ |

- Ուսումնասիրվող երևույթների հետազոտման ինչպես էմպիրիկ (նկարագրական, բնութագրական), այնպես էլ տեսական-մեթոդաբանական մակարդակների ապահովում և դրանց շաղկապվածություն:
- Հետազոտվող հարցերի վերաբերյալ եղած գտական հրապարակումների վերլուծություն:
- Հասարակական և կրթական համակարգում կատարվող վերափոխումների հետազոտման կապակցությամբ կառուցվածքային և ֆունկցիոնալ վերլուծության սկզբունքի կիրառում:
- Հետազոտվող երևույթների գործոնային վերլուծություն և համակարգային մոտեցման սկզբունքի ապահովում:
- Հետազոտության արդյունքների ներկայացման և քննարկման նպատակով տեսական և գիտագործնական սեմինարների կազմակերպում:
- Հետազոտվող հիմնախնդիրների վերաբերյալ ստացված արդյունքների գիտատեսական արժեքավորություն և գործնական նշանակություն: Դրանց կիրառման ուղղությունների և սկզբունքների նախանշում, երաշխավորությունների մշակում:
- Ստացված արդյունքների հրապարակում:
- Այդ արդյունքները բուհական դասավանդման գործընթացներում ներառելու սխեմաների մշակում և իրականացում:

Աշխատանքի բովանդակությունը.

## <u>ԲԱՂԱԴՐԻՉ *1.*</u> ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԴՈԴԻԿԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՓՈԽԱԿԵՐՊՎՈՂ ԿՐԹԱՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ: ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ-ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԵՎ ԻՆՆՈՎԱՑԻՈՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴՐԻՉԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Ինքնուրույն ինովացիոն-կրեատիվ (նորարարական-ստեղծարար) մտածողության կարևոր տարրերը՝ ապացուցման ու փաստարկման տեսությունը, ինչպես նաև վերլուծական մտածողության միջոցները ու ինքնուրույն մտածողության վերլուծական-համադրական եղանակների հիմքերը հետազոտվել են ու դասավանդվել վերջին ութ տարիների ընթացքում ՀՊՄՀ փիլիսոփայության ու տրամաբանության ամբիոնի դասախոսների կողմից «Ընդհանուր տրամաբանության», «Փիլիսոփայություն», «Փաստարկման տեսություն», «Փաստարկում և ճարտասանություն» և «Գիտական աշխատանքի տեխնոլոգիա» դասընթացների շրջանակում:

Չնսեմացնելով դասավանդման ավանդական՝ «դոնոր-ռեցիպիենտային» մեթոդի դերն ու նշանակությունը, այդուհանդերձ հարկ է նկատել, որ ժամանակակից կյանքի պայմանները նորանոր պահանջներ են ներկայացնում անհատին և քաղաքացուն:

Համացանցի հսկայական տեղեկատվական պաշարի մատչելիության պայմանում բուհական ուսուցման կարևոր խնդիրներից մեկն է դառնում ուսանողներին հաղորդել մասնագիտական տեղեկատվության որոնման օպտիմալ եղանակներ և նրանց մոտ ձևավորել համապատասխան հմտություններ: Երիտասարդ մասնագետ պատրաստելու գլխավոր նպաքակներից մեկը բուհի շրջանավարտին ինքնուրույն մտածողությամբ օժտելն է: Կարևոր է, որ նա տիրապետի մասնագիտական խնդիրներն ինքնուրույն լուծելու եղանակներին, զարգացնի իր հետազոտական

| |
|---|
| կարողությունները և ձեռք բերի համապատասխան հմտություններ: Դա նշանակում է, որ բուհական ուսուցման առաջնահերթ խնդիրը պետք է լինի ապահովել ուսանողի ինքնուրույն և կրեատիվ մտածողության զարգացումը, ձեռք բերված տեղեկատվության հասկացման-յուրացման և մասնագիտական խնդիրների լուծման կարողությունների ու հմտությունների ձևավորումը:<br><br>Երիտասարդ մասնագետի ինքնուրույն և ստեղծարար մտածողության ձևավորումը թերևս ամենալուրջ մարտահրավերն է ուղղված մեր օրերի համալսարանական կրթությանը: Խնդիրը գիտակցում են բոլորը, սակայն բացակայում են դրա լուծման մեթոդապես համակարգված և ինստիտուցիոնալացված լուծումները:<br><br>Ներկայումս ուսանողների ինքնուրույն աշխատանքի բովանդակությունը հաճախ սահմանափակվում է ուսանողական ռեֆերատներով, կուրսային և ավարտական աշխատանքներով, որոնց նախապատրաստումը Համացանցի անսահման հնարավորությունների պայմաններում ուսանողի համար հանգում է համապատասխան նյութը «բեռնելու» ոչ բարդ տեխնիկային:<br><br>Ինքնուրույն մտածողության զարգացման արդյունավետ մեթոդաբանություն մշակելու համար անհրաժեշտ է ունենալ ինքնուրույն-ստեղծարար մտածողության բավարար տեսություն, որի հիման վրա հնարավոր կլինի մշակել այդ որակները զարգացնող դասընթացի հայեցակարգ և ուսումնական ծրագիր:<br><br>Հայցորդների և ասպիրանտների կրեդիտային դասընթացների շրջանակում դասավանդվող «Գիտական հետազոտության մեթոդաբանություն» առարկայի դասավանդման շրջանակներում տեսականորեն և գործնականորեն քննարկվում են հետազոտական թեմաների արդիականացմանն ուղղված հարցերը, որոնք նպատակ ունեն նպաստել հայցորդների և ասպիրանտների աշխատանքների որակական աճին: Մասնագիտական մինիմումների քննությունները՝ «Փիլիսոփայություն», «Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն» առարկաներից 2021 թվականին անցկացվել են համակցված առցանց և առերեց տարբերակով:<br><br>Ամբիոնի դոցենտ Հովհաննես Հովհաննիսյանը մասնակցում է նաև հետևյալ դրամաշնորհային ծրագրերին, որի շրջանակներում իր աշխատանքի արդյունքները ներկայացրել է իր կողմից կարդացված դասախոսություններում: Այսպես՝<br>1. Սոցիալական երկխոսությունը ձեռնարկությունում Fridrich Ebert Foundation - Քաղաքացիական հասարակություն, մոդելներ և միտումներ. Արժիությունների դերը; Հողորֆդակցման մշակույթ և հմտություններ թեմաներով դասախոսություններ և պարապմունքներ:<br>2. Erasmus +, «Introducing work-based learning in higher education systems of Armenia and Moldova for better employability of graduates» - Իրավիճակի գնահատում, գործոնային, դերային, կառուցվածքային և գործառութային վերլուծությունների ներկայացում: |
| Ամբիոնի հաշվետու տարում իրականացրած հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման միջոցառումները: |
| Հետազոտական գործունեության եւ ուսումնական գործընթացի փոխկապակցման միջոցառումները իրականացվում են<br>● «Երիտասարդ փիլիսոփայի խմբակի» շրջանակներում, որտեղ դասախոսները և ուսանողները հանդես են գալիս զեկուցումներով, երբեմն՝ համատեղ:<br>● 2020-2021 ուս. տարվա երկրորդ կիսամյակում իրականացվել է երեք ավարտական աշխատանքներ: 2021-2022 ուստարվա առաջին կիսամյակում Ամբիոնում իրականացվում են մեկ կուրսային, չորս ավարտական աշխատանքներ (չորրորդ կուրսում), և երկու հետազոտական (մագիստրատուրայի առաջին կուրսում), որոնց շուրջ պարբերաբար ատեստավորում է իրականացվում ամբիոնի նիստերում կամ ամբիոնի դասախոսների հետ հանդիպում-քննարկումներում: |

| |
|---|
| ● Դասընթացների ընթացքում որպես ընթացիկ ստուգում, ուսանողներն իրականացնում են վերլուծական և ինքնուրույն աշխատանքներ՝ էսսեների ձևով: |

Ա. Պրոֆեսորադասախոսական

| Ամբիոնի գիտական ուղղություններ /նաև՝ տնտ, պայմանագրային, դրամաշնորհային/ | | | | |
|---|---|---|---|---|
| Ուղղության անվանումը | Աշխ-ի տեսակը | Ֆին.աղբյուր | Ֆին.ծավալ | Կատարողներ |
| Փոխակերպվող հասարակության հիմնախնդիրները. Մեթոդաբանակա ն և մեթոդական տեսանկյուններ | Հիմնարար | ՀՀ ԳՊԿ | 3 308 200 ՀՀ դրամ ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը | Հովհաննիսյան Հասմիկ Հովհաննեսի, Հովհաննիսյան Հովհաննես Օնիկի |
| Փոխակերպական տրամաբանությու ն | | | | Ջիջյան Ռոբերտ (փ.գ.դ., պրոֆեսոր) |
| Փաստարկման և միջմշակութային հաղորդակցման ժամանակակից հիմնահարցերը | | | | Հասմիկ Հովհաննիսյան (փ.գ.դ., դոցենտ), Հովհաննես Հովհաննիսյան (փ.գ.թ., դոցենտ), Սաթենիկ Կուզանյան (ամբիոնի հայցորդ), Մարինե Շահբազյան (փ.գ.թ.) |
| Քաղաքացիական հասարակության հաստատություննե րը (ինստիտուտները) փոխակերպվող հասարակության համատեքստում | | | | Հովհաննես Հովհաննիսյան (փ.գ.թ., դոցենտ), Հասմիկ Հովհաննիսյան (փ.գ.դ., դոցենտ) Քաջիկ Օհանյան (փ.գ.դ., պրոֆեսոր) Արուսյակ Ղարիբյան (փ.գ.թ., դոցենտ) |
| Ինքնուրույն, վերլուծական, քննադատական մտածողություն մտածողություն | | | | Ջիջյան Ռոբերտ (փ.գ.դ., պրոֆեսոր) Հասմիկ Հովհաննիսյան (փ.գ.դ., դոցենտ) Հովհաննես Հովհաննիսյան (փ.գ.թ., դոցենտ), |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | Քաջիկ Օհանյան (փ.գ.դ., պրոֆեսոր) |
| Հերմենևտիկա, մշակութային մարդաբանություն, պատմության փիլիսոփայություն | | | | Մոսինյան Դավիթ (փ.գ.թ., դոցենտ), Անդրանիկ Ստեփանյան (փ.գ.թ., դոցենտ) |
| Բիոէթիկա | | | | Սուսաննա Դավթյան (փ.գ.դ., դոցենտ) Մարինե Շահբազյան (փ.գ.թ.) |
| Կրոնի տեսություն և պատմություն | | | | Անդրանիկ Ստեփանյան (փ.գ.թ., դոցենտ), Նելլի Պետրոսյան (դասախոս) |

| ՊԴԱ-ի կողմից հրատարակված ուսումնամեթոդական ձեռնարկներ | | | |
|---|---|---|---|
| Հեղինակ Ա.Ա.Հ. | Ուսումնամեթոդական ձեռնարկի անվանումը | Հր. անուն և տարի | Ծավալ |
| 1. Оганян Каджик М., Оганян К.К. | Методика преподавания социологии: учебное пособие для вузов | Методика преподавания социологии: учебное пособие для вузов, 2021 | 202 |
| 2. Оганян Каджик М. | Методология и методы социологического исследования: учебник для вузов | Издательство Юрайт, 3-е изд., испр. и доп. - (Высшее образование) | 299 |
| 3. Оганян Каджик М. | Социальные технологии: учебник и практикум для вузов | Издательство Юрайт, 3-е изд., испр. и доп. - (Высшее образование) | 252 |
| 4. Оганян Каджик М., Оганян К.К. | Социология: учебное пособие для вузов | Издательство Юрайт, (Высшее образование) | 154 |
| 5. Оганян Каджик М., Оганян К.К. | Социология: учебное пособие для среднего профессионального образования | Издательство Юрайт, (Профессиональное | 154 |

| | | | |
|---|---|---|---|
| | | образование ) | |
| 6. Оганян Каджик М. | Философия и методология социальных наук: учебное пособие для вузов | Издательство Юрайт, (Высшее образование ) | 168 |
| 7. Оганян Каджик М. | Философия человека: учебник для вузов | 2-е изд., испр. и доп. Издательство Юрайт, (Высшее образование ) | 157 |
| 8. Оганян Каджик М. | Общая социология: Учебное пособие с грифом УМО ВУЗов по классическому университетскому образованию | ИНФРА-М, 2020. 8-е изд. | 236 |
| 9. Ջիջյան Ռոբերտ Չալիբեկի, Գևորգյան Մ. | Ֆիզիկայի պարադոքսների լուծումները | Time to ptint | 59 |
| 10. Դավթյան Սուսաննա Համբարձումի | Բիոէթիկայի հիմնահարցեր | Մ. Հերացու անվ. ԵՊԲՀ (հրատարակության փուլում) | 125 |
| 11. Давтян Сусанна Амбардзумовна | Проблемы биоэтики | ЕрГМУ им. М. Гераци (հրատարակության փուլում) | 100 |
| 12. Davtyan Susanna Hambardzum | The problems of Bioethics | YSMU after M. Heratsi (հրատարակության փուլում) | 95 |
| 13. Ղարիբյան Արուսյակ Ալիկի | Օրգանական գյուղատնտեսության էթիկա: Գործնական պարապմունքների մեթոդական ցուցումներ | Հայաստանի ազգային ագրարային համալսարան | 31 |

| Ամբիոնի աշխատակիցների գիտական հոդվածներ և ժողովածուներ, զեկույցներ և թեզիսներ | | |
|---|---|---|
| Հեղինակ Ա.Ա.Հ. | Հոդվածի , զեկույցի անվանումը | Ծավալ |
| 1. Оганян Каджик М. | Качество жизни персонала на предприятиях малого и среднего бизнеса как показатель внутренней социальной ответственности | 6 |
| 2. Оганян Каджик М. | Развитие социологической теории: конвергенция и дивергенция | 6 |
| 3. Оганян Каджик М. | Методологический анализа социального конфликта с позиций системной теории коммуникации Н. Лумана | |
| 4. Оганян Каджик М., Оганян К.К. | Здоровье как ценность в современном обществе (по результатам социологического исследования здорового образа жизни студентов) | 7 |
| 5. Оганян Каджик М. | Современные тенденции развития высшего образования за рубежом | 10 |

| | | |
|---|---|---|
| 6. Оганян Каджик М., Оганян К.К. | Парадигма управления человеческими ресурсами | 6 |
| 7. Հասմիկ Հովհաննիսյան, Հովհաննես Հովհաննիսյան | Толерантность как ресурс личности: структурный анализ | 6 |
| 8. Հասմիկ Հովհաննիսյան | Փիլիսոփայական միտքը Խորհրդային Հայաստանում 1945-1965 թվականներին | 21 |
| 9. OGANYAN, K., OGORODNIKOV, V., PYZH, V., & ROSENKO, S. | Gnoseology-Based Analysis of the Relationship Between Truth and Fallacy. | 15 |
| 10. Hasmik Hovhannisyan, Lin Wang, Fernand Vandamme | Teaching Critical Thinking. Introduction | 7 |
| 11. Hasmik Hovhannisyan, Robert Djidjian | Guides for teaching critical thinking | 23 |
| 12. Hovhannisyan Hovhannes. O. | Epistemological-Methodological and Applied Aspects of Georg Brutian’s Philosophy | 5 |
| 13. Hasmik Hovhannisyan | Theoretical-methodological and conceptual results and approaches developed in the yerevan school for argumentation | 15 |
| 14. Оганян Каджик М., Оганян К.К. | О проблеме формирования мотивации успеха: социологический и психологический подходы | 8 |
| 15. Оганян Каджик М., Оганян К.К. | Анализ социального конфликта с позиций конструктивистско-структуралистической методологии Бурдье | 5 |
| 16. Djidjian Robert | The Secret of Geniality (V) | 42 |
| 17. Մոսինյան Դավիթ | Պատերազմի պատմականացման հեռանկարները և զոհի բարդույթի հաղթահարման ուղիները | 16 |
| 18. Роберт Залибекович Джиджян, Сатеник Арменовна Кузанян | ОБРАЗОВАНИЕ В ЭПОХУ ОНЛАЙН ОБУЧЕНИЯ | 3 |
| 19. Davtyan Sona A., Davtyan Susanna A. | The new model of value attitude towards life | 5 |

| Ամբիոնի գիտական սեմինարներ | |
|---|---|
| Սեմինարի անվանումը | Անցկացման վայրը, օրը |
| Տեսական սեմինար Գիտական հետազոտության մեթոդաբանություն դասընթացների շրջանակներում<br><br>Զեկուցող՝ ամբիոնի պրոֆեսոր, փ.գ.դ. Քաջիկ Օհանյան | Ակադեմիկոս Գեորգ Բրուտյանի անվան փիլիսոփայության և տրամաբանության ամբիոն<br><br>9-ը ապրիլի, 2020 թ.<br><br>(Ամբիոնական) |
| Տեսական սեմինար Փիլիսոփայություն դասընթացների շրջանակներում<br><br>Զեկուցող՝ ամբիոնի դոցենտ, փ.գ.թ. Մարինե Ճահբազյան | Ակադեմիկոս Գեորգ Բրուտյանի անվան փիլիսոփայության և տրամաբանության ամբիոն<br><br>14-ը մայիսի, 2020 թ.<br><br>(Ամբիոնական) |

| | |
|---|---|
| Տեսական սեմինար Փիլիսոփայության պատմություն դասընթացների շրջանակներում<br><br>Զեկուցող՝ ամբիոնի դոցենտ, փ.գ.դ. Հասմիկ Հովհաննիսյան | Ակադեմիկոս Գեորգ Բրուտյանի անվան փիլիսոփայության և տրամաբանության ամբիոն<br><br>21-ը մայիսի, 2020 թ.<br><br>(Ամբիոնական) |
| Ինքնուրույն վերլուծական մտածողության զարգացման մեխանիզմների ապահովումը ՀՊՄՀ-ում<br><br>Զեկուցող՝ ամբիոնի դոցենտ, փ.գ.դ. Հասմիկ Հովհաննիսյան | Ակադեմիկոս Գեորգ Բրուտյանի անվան փիլիսոփայության և տրամաբանության ամբիոն<br><br>15-ը սեպտեմբերի, 2021 թ.<br><br>(Համահամալսարանական) |
| Գիտական աշխատանքի տեխնոլոգիա<br><br>Զեկուցող՝ ամբիոնի պրոֆեսոր, փ.գ.դ. Ռոբերտ Ջիջյան | Ակադեմիկոս Գեորգ Բրուտյանի անվան փիլիսոփայության և տրամաբանության ամբիոն<br><br>8-ը հեկտեմբերի, 2021 թ.<br><br>(Ամբիոնական) |
| Տեսական սեմինար Մշակութային մարդաբանություն դասընթացների շրջանակներում<br><br>Զեկուցող՝ ամբիոնի դոցենտ, փ.գ.թ. Անդրանիկ Ստեփանյան | Ակադեմիկոս Գեորգ Բրուտյանի անվան փիլիսոփայության և տրամաբանության ամբիոն<br><br>22-ը հոկտեմբերի, 2021 թ.<br><br>(Ամբիոնական) |
| Տեսական սեմինար Կրոնի տեսություն և պատմություն դասընթացների շրջանակներում<br><br>Զեկուցող՝ ամբիոնի դոցենտ, փ.գ.թ. Անդրանիկ Ստեփանյան | Ակադեմիկոս Գեորգ Բրուտյանի անվան փիլիսոփայության և տրամաբանության ամբիոն<br><br>22-ը հոկտեմբերի, 2021 թ.<br><br>(Ամբիոնական) |
| «Գիտության պատմություն և փիլիսոփայություն» դասընթացի առարկայական տիրույթը և դասավանդման առանձնահատկությունները<br><br>Զեկուցող՝ ամբիոնի պրոֆեսոր, փ.գ.դ. Քաջիկ Օհանյան | Խ.Աբովյանի անան ՀՊՄՀ Գիտխորհրդի դահլիճ<br><br>29-ը հոկտեմբերի, 2021 թ.<br><br>(Ամբիոնական) |

| Ամբիոնի ՊԴԱ-ի որակավորման բարձրացման և վերապատրաստման տարեկան գրաֆիկ | | | |
|---|---|---|---|
| Դասախոս Ա.Ա.Հ./հաստիք | ՈԲ-ի անցկացման հաստատություն | ՈԲ ժամկետները | Արդյունք |

| | | | |
|---|---|---|---|
| Օհանյան Քաջիկ Մարտիրոսի | НГУ им. П.Ф. Лесгафта по дополнительной профессиональной программе «Особенности коммуникации с лицами с ОВЗ, включая инвалидов, различных нозологических групп» | июнь, 2021г. | Удостоверение о повышение квалификации 7827 00586427. |

Բ. Ուսանողական

| Ուսանողական գիտական հետազոտական ընկերություններ և խմբակներ | | | |
|---|---|---|---|
| «Երիտասարդ փիլիսոփայի ամբիոն» խմբակ | 2017 թ.-ից մինչ օրս | Պատասխանատուներ՝ Ամբիոնի ՊԴԱ և ավագ մասնագետ: Անդամներ՝ Բուհի առկա և հեռակա ուսուցման համակարգի բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողներ,ասպիրանտներ,հայցորդներ | Տեսական սեմինարներ, ուսանողական զեկույցներ, քննարկումներ, կլոր սեղաններ |

| Համատեղ գիտահետազոտական աշխատանքներ | | | |
|---|---|---|---|
| Դասախոս Ա.Ա.Հ. | Ուսանող Ա.Ա.Հ. | Հոդվածի անուն | Հրատ.անվ-մ |
| Ջիջյան Ռոբերտ Արամայիսի | Կուզանյան Սաթենիկ Արմենի | Образование в эпоху онлайн обучения | III ВСЕРОССИЙСКАЯ НАУЧНАЯ КОНФЕРЕНЦИЯ С МЕЖДУНАРОДНЫМ УЧАСТИЕМ «ФИЛОСОФИЯ В СИСТЕМЕ НТПО» |

| Ուսանողական գիտական կոնֆերանսների կազմակերպում և ուս. զեկույցներ | | |
|---|---|---|
| Կոնֆերանս/ միջազգ., հանրապ., բուհական/ | Կոնֆերանսի անվանում/ կազմակերպիչ | Ուսանողական զեկույց / քանակ |
| Միջազգային կոնֆերանս | Всероссийская научно-практическая конференция с международным участием «Социально-гуманитарные технологии в управлении человеческими ресурсами в сфере физической культуры, спорта и здоровья. Потенциал спорта в системе международных отношений. 2 апреля, Санкт-Петербург, 2021 / | 4 (ՀՊՄՀ ասպիրանտներ) |

| | | |
|---|---|---|
| | Պ.Ֆ. Լեսգաֆի անվան Ֆիզիկական կուլտուրայի, սպորտի եւ առողջության ազգային պետական համալսարան (ՌԴ,Սանկտ-Պետերբուրգ); ՀՊՄՀ Փիլիսոփայության և տրամաբանության ամբիոն | |

4. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

| Ամբիոնի արտաքին կապերի և միջազգայնացման աշխատանքների ընդհանուր նկարագրությունը և վերլուծությունը հաշվետու տարում: |
|---|
| Ամբիոնի արտաքին կապերը ամենից առաջ ձևավորվում, ամրապնդվում և կատարելագործվում են Ամբիոնի կողմից հրատարկվող պաշտոնական հանդես WISDOM միջազգային ամսագրի շրջանակներում: Հաշվետու տարում հրատարակվել են ամսագրի 1(17), 2(18), 3(19), Special Issue 1(1) - Philosophy of Law, 4(20) համարները: Հարավային Կովկասում հումանիտար գիտությունների շրջանակում այն միակ գիտական հանդեսն է, որ ընդգրկվել է Scopus և Web of Sience (Clarivate Analitics) գիտաչափական շտեմարաններում: Scopus միջազգային գիտաչափական շտեմարանի հաշվարկմամբ՝ WISDOM-ի ազդեցության գործակիցը 2021 թվականին 0,5-է: WISDOM հանդեսն ընդգրկված է ՀՀ ԲՈՀ-ի ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների (դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների համար) ցուցակում և գրանցված է Scientific Indexing Services (SIS), Journal Impact Factor (JIF), Eurasian Scientific Journal Index (ESJI), Scientific Journal Impact Factor (SJIF), International Scientific Indexing (ISI), European Reference Index for the Humanities and Social Sciences (ERIH PLUS), Advanced Scientific Index (ASI), eLIBRARY, EBSCO, CYBERLENINKA, CROSSREF, PHILPAPERS WORLDCAT և Google Scholar միջազգային գիտաչափական շտեմարաններում: Միջազգային կապերի տեսանկյունից առավել խոսուն է WISDOM-ի խմբագրական խորհուրդը, որի անդամների հետ WISDOM—ի խմբագրակազմը մշտապես գտնվում է սերտ համագործակցության մեջ: Տե՛ս https://www.wisdomperiodical.com/index.php/wisdom/about/editorialTeam.<br>WISDOM-ին ներկայացվող ձեռագիր աշխատանքները հաղթահարում են գրախոսության խիստ փուլ, իսկ գրախոսների բանկը ընդգրկված են միջազգային փորձագետ- գիտնականներ, որոնց հետ ևս խմբագրակազմը մշտապես համագործակցում է:<br>2021 թվականի երեք համարներում հրատարակվել են Հունաստանի, Ռուսաստաի, Բելառուսի, Իրանի, Սլովակիայի, Ղրղզստանի, Ուկրաինայի տարբեր համալսարաններից և կազմակերպություններից գիտնականներ: Այդ հոդվածներին կարելի է ծանոթանալ բաց հասանելիությամբ գործող WISDOM-ի տարբեր համարներում՝ այցելելով վերջինիս պաշտոնական կայքէջի արխիվ՝ https://wisdomperiodical.com/index.php/wisdom/issue/archive<br>WISDOM-ը հրատարակվում է տարեկան չորս անգամ: 2021 թվականին հրատրակվել է նաև հատուկ կամար նվիրված իրավունքի փիկլիսոփայությանը՝ Special Issue 1(1) - Philosophy of Law: WISDOM-ը հարթակ է նաև ամբիոնի դասախոսների համար  և ուրախալի է նշել, որ 2021 թվականին ևս հրատարակվել են Ամբիոնի դասախոսների հոդվածներից:<br>Շարունակվում է համագործակցությունը Չինաստանի South-West համալսարանի Փիլիսոփայության ֆակուլտետի եւ Արհեստական ինտելեկտի եւ տրամաբանության միջազգային գիտահետազոտական ինստիտուտի փիլիսոփա դասախոսների և գիտնականների հետ: Սանկտ Պետերբուրգի Պ.Ֆ. Լեսգաֆտի անվան Ֆիզիկական կուլտուրայի, սպորտի եւ առողջության ազգային պետական համալսարանի և ՀՊՄՀ Ակադեմիկոս Գ.Ա.Բրուտյանի անվան  Փիլիսոփայության և տրամաբանության ամբիոն հետ կազմակերպվել է համատեղ գիտաժողով՝  Всероссийская научно-практическая конференция с международным участием «Социально-гуманитарные технологии в управлении человеческими ресурсами в сфере физической культуры, спорта и здоровья. Потенциал спорта в системе международных отношений. 2 апреля, Санкт-Петербург, 2021: |
| Ամբիոնի համագործակցությունը տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ հաշվետու տարում: |
| Համագործակցություն տեղական բուհերի ամբիոնների հետ<br>ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտ<br>Հայաստանի ամերիկյան համալսարան<br>Հայաստանի ֆրանսիական համալսարան |

| |
|---|
| ԵՊՀ<br>Երևանի Վ:Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան<br>ՀՀ Բոկ<br>ՀՀ ԳՊԿ |

| Համագործակցություն արտասահմանյան բուհերի ամբիոնների հետ | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Բուհ/ամբիոն /երկիր | Համագործակցության ձևը | | | | |
| | Ուսումնական | Մեթոդական | Գիտական | Հետազոտական | Այլ |
| Աթենքի պետական համալսարան,փիլ իսոփայության բաժանմունք (Հունաստան) | | | √ | √ | |
| ԱՄՆ-ի Նյու Հեվն նահանգի Հարավային Կոնեկտիկուտի պետական համալսարան,փիլ իսոփայության բաժանմունք (ԱՄՆ) | | | √ | √ | |
| Ամստերդամի պետական համալսարան,փիլ իսոփայության բաժանմունք(Հոլա նդիա) | | | √ | √ | |
| Բուխարեստի պոլիտեխնիկակա ն համալսարան, փիլիսոփայության բաժանմունք(Ռում ինիա) | | | √ | √ | |
| Ինսբրուքիասարա ն, փիլիսոփայության բաժանմունք(Ավս տրիա) | | | √ | √ | |
| Բելառուսի պետական համալսարան, փիլիսոփայության բաժանմունք(Բելա ռուս) | | | √ | √ | |
| Իոաննինայի համալսարան, փիլիսոփայության բաժանմունք (Հունաստան) | | | √ | | |
| Լայբցիգի պետական համալսարան, | | | √ | √ | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Փիլիսոփայության ինստիտուտ (Գերմանիա) | | | | | |
| Մ.Վ. Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարան,փիլ իսոփայության ֆակուլտետ | | | √ | √ | |
| Մոսկվայի քաղաքային մանկավարժական համալսարան, փիլիսոփայության և սոցիալական գիտությունների ամբիոն(ՌԴ) | | | √ | √ | |
| Չինաստանի Հարավ-Արևմտյան համալսարան, Սոցիալական գիտությունների ֆակուլտետի փիլիսոփայության ամբիոն(Չինաստան) | √ | √ | √ | √ | |
| Պիտեր Պազմանի անվան կաթոլիկ, փիլիսոփայության բաժանմունք (Հունգարիա) | √ | √ | √ | √ | |
| ՌԴ ԳԱ Փիլիսոփայության ինստիտուտ | | | √ | √ | |
| Տուրկուի պետական համալսարա,փիլի սոփայության ինստիտուտ (Ֆինլանդիա) | | | √ | √ | |
| Պ.Ֆ. Լեսգաֆի անվան Ֆիզիկական կուլտուրայի սպորտի և առողջության ազգային պետական համալսարան,Սոց իալական և հումանիտար գիտությունների ամբիոն (ՌԴ) | √ | √ | √ | √ | |
| Վ. Յա. Կիկոտի անվան | | | √ | √ | √ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ռուսաստանի ներքին գործերի նախարարության Մոսկվայի համալսարան, Պետության և իրավունքի տեսության ամբիոն (ՌԴ) | | | | | |

| Պրոֆ-դասախոսական անձնակազմի շարժունակություն | | | | |
|---|---|---|---|---|
| Բ. Ամբիոնի կողմից հրավիրված արտասահմանցի դասախոսներ | | | | |
| Օհանյան Քաջիկ Մարտիրոսի | պրոֆեսոր | Պ.Ֆ. Լեսգաֆտի անվան ֆիզիկական կուլտուրայի, սպորտի եւ առողջության ազգային պետական համալսարան (ՌԴ,Սանկտ-Պետերբուրգ) | 2021թ. մայիս, սեպտեմբեր-դեկտեմբեր | Համավարակով պայմանավորված առցանց եղանակով իրականացվել են «Գիտական հետազոտության մեթոդաբանություն», «Գիտության փիլիսոփայություն,մեթոդաբանություն և էթիկա» դասընթացները՝ բակալավրիատի ուսանողների, ասպիրանտների և հայցորդների համար: |

5. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

| Ամբիոն աշխատանքը հանրության շրջանում և հանրակրթական դպրոցների աշակերտների հետ, կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմները: |
|---|
| Ամբիոնի դոցենտ Հովհաննես Հովհաննիսյանը ՀՀ կառավարությանը կից հանրային խորհրդի անդամ է և դրա շրջանակներում իրականացնում է բազմաբնույթ հանրայի աշխատանք: |

| Աշխատանք հանրակրթական դպրոցներում՝ աշակերտների հետ | | | |
|---|---|---|---|
| Աշխ-ի տեսակը | Համակարգող Ա.Ա.Հ. | Միջոցառման անվանումը | Ժամկետը |
| Ուսումնական | Հովհաննես Հովհաննիսյան | Երևանի պետական համալսարանին առընթեր Արտաշես Շահինյանի անվան ֆիզմատ դպրոց, ուսուցիչ | 2020-ից առ այսօր |
| Մեթոդական | | Երևանի Գագիկ Ստեփանյանի անվան թիվ 135 միջնակարգ դպրոցի կառավարման խորհրդի նախագահ | 2020-ից առ այսօր |
| | | | |
| | | | |
| Դաստիարակչական | | | |
| | | | |
| | | | |

| Աշխատանք հանրության շրջանում | | | |
|---|---|---|---|
| Աշխ-ի տեսակը | Համակարգող Ա.Ա.Հ. | Միջոցառման անվանումը | Ժամկետը |
| **Թրեյնինգներ, Դասախոսություններ, պարապմունքներ, պայմանագրային աշխատանք** «Արդյունավետ հաղորդակցման հմտություններ», «Հասարակական գործընթացներ. Ինստիտուցիոնալացում և ինստիտուցիոնալ ճգնաժամ: «Կառավարման հիմնախնդիրներ», «Բանավեճի տեսություն և արվեստ» թեմաներով | Հովհաննես Հովհաննիսյան | ԵՊՀ Հետբուհական ու լրացուցիչ կրթության վարչություն, դասախոսների որակավորման բարձրացման ծրագրեր | 2020-2021 |
| «Փաստարկում և հռետորաբանություն» թեմայով | Հովհաննես Հովհաննիսյան | Արդարադատության ակադեմիա, դատախազների, դատավորների թեկնածուների կրթական ծրագիր | 2017-2021 |
| Dasa[wswu2jwun «Փաստարկում և ճարտասանություն» թեմայով | | ՀՀ փաստաբանական դպրոցի կրթական ծրագիր | 2017-2021 |
| Դասախոսություն-պարապմունք «Արդյունավետ հաղորդակցման հմտություններ թեմայով» | | «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամ: Մեդիա իավունք դատավորների համար ծրագիր | 03-04. 06.2021թ |
| Դասախոսություններ և պարապմունքներ «Փաստարկում և ճարտասանական հմտություններ» թեմայով | | Արբիտրների բարձրագույն դպրոցի կրթական ծրագիր | 2017-2021 |
| Դասախոսություններ և պարապմունքներ «Քաղ. հասարակություն. ինստիտուտները և գործառույթները», «Հասարակական համակարգի փոխակերպման և կառավարման առանձնահատկությունները: Կանանց մասնակցության հիմնախնդիրներ», «Հասարակական-քաղաքական երկխոսության մշակույթ» թեմաներով: | | Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի լիդերության դպրոցներում | 2017-2021 |

6. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

| |
|---|
| Ներկայացնել որակի ապահովման ներքին համակարգի աշխատանքները և արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը: |

| |
|---|
| Ուսումնական գործընթանցների որակը ապահովելու և բարելավելու նպատակով ամբիոնում իրականացվում է հետևողական և համակարգված քաղաքականություն: Այսպես՝<br>1. Դասընթացի արդյունավետության գնահատում՝ ուսանողների, մասնավորապես «Երիտասարդ փիլիսոփայի ամբիոն» խմբակի շրջանակներում հարցում կազմակերպելու եղանակով:<br>2. Փոխադարձ դասալսումների գրաֆիկի կազմում և իրականացում:<br>3. Աշխատաշուկայում ՀՊՄՀ շրջանավարտների զբաղվածության պատկերի ուսումնասիրություն և վերհանում սոցիոլոգիական հետազոտության իրականացման եղանակով, ինչի արդյունքները հրատարակվել են առանձին գրքույկով և քննարկման են դրվել ֆակուլտետների դեկանների հետ: Հարցաշարերում տեղ են գտել կրթության որակին վերաբերող բավականաչափ հարցեր:<br>4. Ամբիոնի կողմից բակալավրիատի և մագիստրատուրայի բոլոր մասնագիտություննե րում իրականացվող դասընթացների առարկայական նկարագրերի, ուսումնամեթոդա կան փաթեթների վերանայում:<br>6. (1) կետին համապատասխան՝ քննական և միջանկյալ ստուգումների հարցաշարերի, թեստերի բանկի վերակազմում:<br>7. Քննաշրջանի և լուծարքի շրջանի արդյունքների քննարկում ու վերլուծություն:<br>8.Google Classroom-ի հարթակում իրականացվող գնահատման էլեկտրոնային համա կարգի գործառնության հետևում: |
| Ներկայացնել գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության աստիճանը և վերլուծել արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/: |
| Ամբիոնի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության մեջ Ամբիոնի ներքին շահակիցների՝ ուսանողների, ներգրավվածության մասին տե՛ս սույն փաստաթղթի Ամբիոնի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության վերլուծությունը ներկայացնող բաժիններում:<br>Արտաքին շահակիցները Ամբիոնի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության մեջ ընդգրկված են այնքանով, որքանով Ամբիոնում աշխատում են համատեղող դասախոսներ (Քաջիկ Օհանյան, Հովհաննես Հովհաննիսյան, Սուսաննա Դավթյան, Դավիթ Մոսինյան, Արուսյակ Ղարիբյան) և այնքանով, որքանով, որ Ամբիոնի մի շարք դասախոսներ աշխատում են նաեւ այլ համալսարաններում (Երևանի պետական համալսարան, Երևանի Մ.Հերացու անվան բժշկական համալսարան, Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարան, Հյուսիսային համալսարան, Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա և այլն): |

| Ամբիոնի դասախոսների կատարած աշխատանքի որակի ապահովում և մշտադիտարկում | | |
|---|---|---|
| Միջոցառման անվանումը | Պատասխանատու | Արդյունքահենություն |
| Google Classroom հարթակում դասախոսների աշխատանքների մշտադիտարկում և անհրաժեշտության դեպքում առաջարկությունների եւ դիտողությունների ներկայացում | Ամբիոնի Google Classroom-ի պատասխանատու Տաթև Արշակյան - 2020-2021 ուս տարի, երկրորդ կիսամյակ, Սաթենիկ Կուզանյան - 2021-2022 ուս տարի, առաջին կիսամյակ, Ամբիոնի վարիչ Հասմիկ Հովհաննիսյան | Ժամանակին առկա թերությունների եւ բացթողումների վերհանում, դրանց շտկման և կարգավորման մեխանիզմների և գործընթացների մշակում և կիրառում |